

**ՂԱՍՏԱԹ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ
(Խոսվածք)**

Ելել ա, չի էլել մի քյասիր մարդ: Ունեցել ա մի հինգ շան քյուլֆաթ: Էս հինգ շան քյուլֆաթիցը էս մարդը փախել ա, ունի ոչ ուտեցնի, հազցնի: Գնացել ա ձորի միջին, ջրի դրադին մի մենձ խնձորքի գտել, տեհել ա՝ շատ հասած ա: Էս խնձորիցը ինքը կերել ա՝ առողջացել, ջահելացել: Խնձորները քաղել ա, ջերը լցորել, գնացել ա դրբա քաղաք:

Թաքավորը նրան տեհել ա, կանչել ա, թե.— Արի՛, տենանք ձեր թաքավորը ինչպէ՞ս ա ձեզ պիհում: Խարջըները ինչքա՞ն ա առնում:

Չուլումքար թաքավորի երկրիցն ա էլել:

Ասել ա.— Գլխին քան մանեթ առնում ա, էդքան էլ անջախ ենք աշխատում:

Ասել ա.— Վա յ, վա յ, վա յ, շանս դրս զա ձեզ իմա, ին չ անեմ, ծերութինն առել ա ինձ:

Ասավ թե.— Թաքավորն ապրած կենա, ես էլ քե պէս ծերացել ի, էկա, ձորի միջին խնձոր ուսստ էկավ, անմահական էր, ի նշ էր, կերա՝ ջահելացա:

Ասավ թե.— Որդի՛, էն խնձորէն կարալ չե՞ս գտնի:

— Ո՞նց չեմ կարալ գտնի. իմ էկած ճամփան ես կգիտենամ:

— Դե բա ո՞նց անենք, որ դու բերես, ուտենք, ջահելանանք, մի կենտ բեխա ունենք օխտը տըրեկան, ես էքուց կմեռնիմ, կըմնա անտեր-անտիրական:

— Ի՞նչ կտաս, ասա, որ զնամ բերեմ:

Թե.— Քու քաշովը մին ոսկի կը տամ:

Էս մարդը ուներ ջերումը խնձորիցը, հանեց, մինը խանումին էրետ, մինը՝ թաքավորին:

Ուափուտը վե կացավ տեհավ, որ խանումն էլ ա ջահելացել, թաքավորն էլ:

Վերջը էս մարդը քաշեց ոսկին, էրետ էդ մարդին:

— Օ հ աստոծ,— ասավ թաքավորը,— դու որ իմ կանչը կատարեցիր, ես պետք ա մատադանա տամ քյասրբին, որբին:

Էս թաքավորը զար զցեց, վաղը բաց արավ, փայ արավ աղքատին, որբին:

Արի՛, որ էն քյասիր մարդը ոսկին առած տուն ա զնում: Գընաց, մտիկ արավ, որ մի մարդ քնած ա:

Ասավ.— Տեր աստոծ, էս մարդին վեկացնէ՞մ, թե անցնիմ զնամ:— Չէ՛, չէ՛,— ասավ,— վե կացնեմ:

Աստըծանէ միտքը էկավ, որ վեկացնելը լավ ա, մի բան էլ ա կիմանա: Վեկացրուց: Էդ քնած մարդն էլ Սողոմոն իմաստունն ա ըլել:

Սողոմոն իմաստունը ասավ.— Ա՛յ որդի, ես քնած չի, ես քեզ ճամփա պահեի, թե տենամ քու աճալն ա՞ , թե՝ չէ: Առաջիդ գալիս ա Օխտը զլսանի ուշապը, գալիս ա, որ ուսստ զա քեզ, ուտի, խազնեդ էլ կերթա, ջանդ էլ կերթա: Հա՛, ես որ ինձ վե կացրիր, իմ շվարումը արի զնանք, անց կենանք:

Սրանք զնացին, անց կացան, Ուշապին ուսստ չի էկան: Գնացին քշերը մնաց էդ մարդի շվարումը: Հըմի արի տես, որ էս մարդը էն օսկիքը որ առել էր, էն դդար էր ուրախացել, որ խնձորը մտահան էր արել, որ իմաստունին տա:

Արի, որ ուափուտը լիսացավ, վե կացավ, որ ըդու ըլի, իմաստունը ասավ.— Որդի՛, էն աստծու կամքն էր, որ էն որախատան խնձորիցը բերել էր քեզ ուսստ էր բերել, էդ խազինեն, էդ ոսկին, որ տարար, էլ եդ չգաս, քու բեխանց դամաթը էդքան էր, որ տանես տուն, էլ եդ չգաս էդ ճամփովը: